

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականի առաջին եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ

2021 թվականին առաջին եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 3221 թղթակցություն, առաքվել՝ 2050 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ Ազգային ժողովից՝ 7, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 83, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 380, հանրապետական գործադիր մարմիններից և գերատեսչություններից՝ 363, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 671, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 1020, գաղտնի թղթակցություն՝ 21, քաղաքացիներից՝ 1781 դիմում: ՀՀ Սյունիքի մարզպետարան է վերահասցեագրվել 44 դիմում, որից՝ ՀՀ Ազգային ժողովից՝ 2, ՀՀ վարչապետի աշխատակազմից՝ 25, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից՝ 13, հանրապետական գործադիր մարմիններից՝ 4 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2021թ. առաջին եռամսյակում կատարվել է 175 քաղաքացիների ընդունելություն:

Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզպետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ ու ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: